

# ՍԱՂՄՈՍ 79

## ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏՐՈՖ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ

NASB	NKJV	NRSV	TEV	NJB
Ողբ Երուսաղեմի ավերման վրա, և օգնության աղոթք	Ողբ և աղոթք թշնամիների կողմից ավերված Իսրայելի համար	Ազգային թշնամիներից ազատվելու աղոթք	Ազգի փրկության համար աղոթք	Ազգային ողբ
<u>MT ներածություն</u> Ասափի աղոթքը				
79:1-7	79:1-7	79:1-4	79:1-7	79:1-2 79:3-5 79:6-7
79:8-13	79:8-10 79:11-12 79:13	79:8-10 79:11-13	79:8-10 79:11-13	79:8-9 79:10-11 79:12-13

### ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԳ ՑԻՎԼ («Սուրբ Գիրքը ճիշտ կարդալու ուղեցույց») ԸՍՏ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳՐԻ ՀԵՂԻՆԱԿԻ ՆՊԱՏԱԿԻ ՀԵՏՔԵՐՈՎ

Սա սերտողության ուղեցույց մեկնություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ հերթականությունը հետևյալ կերպ է՝ դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին: Դուք չպետք է այն զիջեք որևէ մեկնաբանի:

Մեկ անգամ նստելով կարդացեք ամբողջ գլուխը: Գտեք թեմաները: Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունները ներշնչանքով չեն կատարված, սակայն դրանք կարևոր են բնագրի հեղինակի նպատակին հետևելու համար, որը հանդիսանում է մեկնաբանության սիրտը: Յուրաքանչյուր պարբերություն ունի միայն մեկ թեմա:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն, և այլն

### ԲԱՌԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

<p><b>NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 79:1-7</b></p> <p><sup>1</sup>ՈՎ Աստված, հեթանոսները մտան Քո ժառանգության մեջ, Պղծեցին Քո սուրբ տաճարը, Երուսաղեմն ավերակների վերածեցին:</p> <p><sup>2</sup>Քո ծառաների դիակները երկնքի թռչուններին կեր տվին, Քո սրբերի մարմինը՝ երկրի գազաններին:</p>
---

**3Նրանց արյունը ջրի պես հոսեցրին Երուսաղեմի շուրջը,  
 Ու մեկը չկար, որ նրանց թաղեր:**  
**4Մեր դրացիների նախատինքի առարկան դարձանք  
 Մեզ շրջապատողների՝ ծաղրուծանակը:**  
**5Մինչև ե՛րբ, ո՛վ ՏԵՐ, միշտ պիտի բարկանա՛ս,  
 Քո նախանձախնդրությունը կրակի պես պիտի բորբոքվի՞:**  
**6Թափի՛չ Քո բարկությունը հեթանոսների վրա,  
 Որոնք Քեզ չեն ճանաչում, ու այն թագավորությունների վրա,  
 Որոնք չեն կանչում Քո անունը:**  
**7Քանի որ Հակոբին կույ տվեցին  
 Ու նրա բնակավայրերն ավերեցին:**

**79:1-3** Այս համարները ընդգծում են, թե ինչ են արել հեթանոս զավթիչները ուխտի ժողովրդի հետ (ՎԱՂԱԿԱՏԱՐՆԵՐ):

1. հարձակվեցին Քո ժառանգության վրա (բառացի՝ «մտան») – BDB 97, KB 112, *Qal* ՎԱՂԱԿԱՏԱՐ
2. պղծեցին Քո սուրբ տաճարը – BD 379, KB 375, *Piel* ՎԱՂԱԿԱՏԱՐ
3. Երուսաղեմը ավերակների վերածեցին (բառացի՝ «դնել», «վերածել», «թողնել») – BDB 962, KB 1321, *Qal* ՎԱՂԱԿԱՏԱՐ
4. դիակները երկնքի թռչուններին կեր տվին – BDB 678, KB 733, *Qal* ՎԱՂԱԿԱՏԱՐ, տես՝ Երեմ .7:33, 16:4, 19:7, 34:20
5. նրանց արյունը թափեցին – BDB 1049, KB 1629, *Qal* ՎԱՂԱԿԱՏԱՐ, տես՝ Սաղմ .79:6,10
6. մեկը չկար, որ նրանց թաղեր – BDB 868, KB 1064, *Qal* ԴԵՐԲԱՅ

Հրեաները չէին կարողանում հասկանալ, թե ինչպես կարող էր իրենց Աստվածը թույլ տալ, որ իրենց երկիրը նվաճեին և տաճարը պղծեին (այսինքն՝ Ամբակում): Այն կարծես թե հարցականի տակ էր դնում Նրա՝

1. գորությունը
2. խոստումները
3. Իսրայելի համար նպատակը

Սաղմոս 79:8-13 տալիս է պատասխանը (տես՝ Դան .9:1-14):

**79:1 «Ո՛վ Աստված»** Սա առաջին մի քանի ԲԱՑԱԿԱՆՉԱԿԱՆՆԵՐԻՑ մեկն է:

1. Ո՛վ Աստված (*Էլոհիմ*), Սաղմ .79:1
  2. Ո՛վ ՏԵՐ (ՅԱՀՎԵ), Սաղմ .79:5
  3. Ո՛վ Աստված (*Էլիմ*), Սաղմ .79:9
  4. Ո՛վ Տեր (*Ադոնայ*), Սաղմ .79:12
- AB ավելացնում է ևս երկուսը (Էջ՝ 249):
5. Ով Աստված, Սաղմ .79:6
  6. Ով Դպիր, Սաղմ .79:8 /հայերենում չկա/

❖ **«Քո ժառանգությունը»** Ուշադրություն դարձրե՛ք, թե քանի անգամ է սաղմոսերգուն շեշտադրում, որ հարձակման առարկաները պատկանում են ՅԱՀՎԵԻՆ:

1. Քո ժառանգությունը, Սաղմ .79:1
2. Քո տաճարը, Սաղմ .79:1
3. Քո ծառաները, Սաղմ .79:2,10
4. Քո անվան փառքի համար, Սաղմ .79:9
5. Քո անվան համար, Սաղմ .79:9
6. Քո ժողովուրդը, Սաղմ .79:13
7. Քո արոտի ոչխարները, Սաղմ .79:13

❖ «ավերակներ» Սա հազվադեպ տերմին է (BDB 730), որը գործածվում է Միքիայի գրքում երկու անգամ:

1. Սամարիայի կործանման համար, Միք. 1:6
2. Երուսաղեմի կործանման համար, Միք. 3:12 (մեջբերված է Երեմ. 26:18-ում):

Այս Սաղմոսը կարծես թե արտացոլում է Ք.Ա. 586թ. Նաբուգոդոնոսորի ձեռքով Երուսաղեմի անկումը (տես՝ 4 Թագ. 25:2, 2 Մնացորդաց 36 և Ողբ Երեմիա):

**79:2** ՀՄԱ-ում անպատշաճ կերպով թաղված լինելը սարսափելի էր: Գազանների կողմից հոշոտված լինելը ասիական վերջաբան էր (տես՝ Երեմ. 7:33, 8:2, 34:20, Եզեկ. 29:5, 32:4-6, 33:27, 39:4-5, 17-20): Սաղմոս 79:2, 2 Օրինաց 28:26-ում անհնազանդության համար անեծքի իրականացում էր:

### **ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԹԱՂՄԱՆ ԾԵՍԵՐ**

**79:3** Այս համարի առաջին տողը ակնարկում է ծիսական մի ընթացակարգ, որտեղ գոհի արյունը թափվում էր գոհասեղանի հիմքի վրա այն բանից հետո, երբ մի փոքր քանակությամբ արյուն ցողվում էր գոհասեղանի եղջյուրների վրա (այսինքն՝ Ղևտ. 4:7): Երուսաղեմը կործանվեց որպես ծիսական գոհաբերություն, իսկ մեռածների դիակները եղան վայրի գազանների համար որպես կերակուր:

**79:4** Ուխտի ժողովուրդը դարձել էին՝  
Ուխտի ժողովուրդը դարձել է՝

1. նախատինք (բառացի՝ «ծաղրուծանակ», BDB 541), իրենց հեթանոս հարևանների մոտ, տես՝ Սաղմ. 44:13, 69:9, 19, 80:6, 89:41
2. ծաղրուծանակ (բառացի՝ «ծաղր», BDB 541), տես՝ Սաղմ. 44:13, Եզեկ. 23:32, 36:4
3. ծաղրանք, տես՝ Սաղմ. 44:13, Երեմ. 20:8 (ԳՈՅԱԿԱՆ, BDB 887, կիրառված միայն երեք անգամ և ԲԱՅԻ ձևը ՀԿ-ում ևս չորսով ավելի):

Սա Իսրայելի համար ՅԱՀՎԵԻ նպատակի ճիշտ հակառակն է, որը պետք է օգներ ազգերին, որ ճանաչեին Նրան և դարձի գային Նրան (տես՝ Եզեկ. 36:22-23):

**29:5** Այս երեք հարցերը:

1. մինչև ե՞րբ (տես՝ Սաղմ. 13:1, 74:10, 80:4, 89:46, 90:13, 94:3):
2. միտ պիտի բարկանա՞ս (տես՝ Սաղմ. 44:23, 74:1, 77:7, 85:5, 89:46)
3. Քո նախանձաձնդրությունը կրակի պես պիտի բորբոքվի՞ (տես՝ Սաղմ. 89:46)

Կենտրոնանում են Իսրայելի շփոթության և աղոթքի վրա: Փոխվել էր արդյոք ՅԱՀՎԵԻ բացառիկ փոխհարաբերությունը Աբրահամի սերունդների հետ (տես՝ Սաղմ. 89:1-4):

ՅԱՀՎԵՆ ունի անփոփոխ նպատակ Իսրայելի համար (տես՝ Ղևտացիների 26, 2 Օրինաց 27-30, տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՅԱՀՎԵԻ ՀԱՎԻՏԵՆԱԿԱՆ ՓՐԿԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ): Յուրաքանչյուր սերունդ պետք է ընդունի և ապրի ուխտը: Հիշե՛ք, որ Սաղմոսները հանդիսանում են ՀԿ-ի «երկու ճանապարհի» մասը (տես՝ 2 Օրինաց 30:15-20, Սաղմոս 1):

**79:6-7** Սա աղոթք է («թափիր», BDB 1049, KB 1629, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ), որ ՅԱՀՎԵՆ գործի դատաստանի և փրկության հարցում (տես՝ Սաղմ. 79:9) Իր ուխտի ժողովրդի համար (տես՝ Երեմ. 10:25): Նկատե՛ք, թե ինչպես են ազգերը (BDB 156) բնութագրվում:

1. որոնք Քեզ չեն ճանաչում (տես՝ Հատուկ Թեմա. Ծանաչել)
2. որոնք Քո անունը չեն կանչում (տես՝ Հատուկ Թեմա. Ստվերը որպես Պաշտպանության և Հոգածության փոխաբերություն):

Պետք է հիշել, որ ազգերը՝

1. չունեն ճշմարիտ հայտնություն
2. ղեկավարվում են դիվական ներշնչանքով հեթանոս կուռքերի կողմից

Իսրայելը պետք է լինի Իր մասին ՅԱՀՎԵԻ հայտնությունների «ջրուղին»: Չարմանալի չէ, որ ազգերը գործում են անպատշաճ կերպով (տես՝ Սաղմ. 79:7): Չարմանալին այն է, որ Իսրայելը, բոլոր հոգևոր օգուտներով հանդերձ (տես՝ Հռոմ. 9:4-5) գործում է նմանօրինակ (տես՝ Ղուկաս 12:48):

**79:7 «Քանի որ նրանք. . .»** MT տարբերակը տալիս է «քանի որ նա. . .», սակայն հնագույն տարբերակները տալիս են «նրանք» (LXX, Սիրիակը, Վուլգատտան): Փոփոխությունը ներառում է միայն ձայնավորների տեղափոխություն:

<b>NASB, NRSV</b>	<b>«բնակություն»</b>
<b>NASB լուսանցք</b>	<b>«արոտ»</b>
<b>NKJV</b>	<b>«բնակավայր»</b>
<b>TEV</b>	<b>«երկիր»</b>
<b>NJB, JPSOA</b>	<b>«տուն»</b>
<b>REB</b>	<b>«հայրենիք»</b>

Այս արմատն (BDB 627) ունի մի քանի նշանակություններ:

1. հովվի (այսինքն՝ Երեմ. 33:12) կամ անձի (այսինքն՝ Հոր 18:15) բնակատեղին
2. ազգի բնակատեղին (այսինքն՝ Երեմ. 31:23՝ Հուդան, 49:20՝ Եդովմ, 50:45՝ Բաբելոն)
3. քաղաք (տես՝ Եսայի 33:20)
4. հեռավոր ռազմական առաջնագիծ (NIDOTTE, հատոր 3, էջ՝ 55, այսինքն՝ Սաղմ. 79:7, Եսայի 27:10, Երեմ. 10:25, 25:30)
5. բնակավայր (այսինքն՝ երկիրը, տես՝ Երեմ. 25:30)
6. հանգստության վայր (BDB 628, տես՝ Եսայի 32:18 զուգահեռներ)

Սաղմոս 79:7 հետևում է կետ 2-ի կիրառությանը:

**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 79:8-13**

**<sup>8</sup>Մի՛ հիշիր մեր նախկին անօրենությունները,  
Թող շուտով մեզ հասնեն Քո ողորմությունները,  
Քանի որ շատ ենք նվաստացել:  
<sup>9</sup>Օգնի՛ր մեզ, ո՛վ մեր փրկության Աստված,  
Քո անվան փառքի համար, Քո անվան համար փրկի՛ր մեզ  
Ու քավի՛ր մեր մեղքերը:  
<sup>10</sup>Ինչո՞ւ հեթանոսներն ասեն. «Ո՛ր է նրանց Աստվածը»:  
Թող հեթանոսների մեջ Նա ճանաչվի՝  
Մեր աչքի առաջ ծառաներիդ թափված արյան վրեժխնդրության միջոցով:  
<sup>11</sup>Բանտարկյալի հառաչանքը Քո առջև թող ելնի.  
Քո բազկի զորությամբ ապրեցրո՛ւ մահվան սահմանվածներին:  
<sup>12</sup>Ու յոթնապատիկ իրենց ծոցը վերադարձրու այն նախատինքը,  
Որով մեր դրացիները Քեզ անարգեցին, ո՛վ ՏԵՐ:  
<sup>13</sup>Իսկ մենք՝ Քո ժողովուրդն ու Քո արոտի ոչխարները,  
Հավիտյան քեզ ենք գոհություն հայտնելու  
Ու Քո փառքն ենք պատմելու սերնդե սերունդ:**

**79:8-9** Այս համարներում ի հայտ են գալիս երկու կարևոր հարցեր:

1. Իսրայելի աղոթքն ուղղված Աստծուն, որպեսզի հիշի Իր ուխտը
2. Իսրայելի աղոթքն ուղղված Աստծուն, որպեսզի չհիշի իրենց շարունակական ապստամբությունը և անհնազանդությունը:

Նրանք հիմնում են իրենց աղոթքները այն փաստի վրա, որ ազգերը սխալ են հասկանալու ՅԱՀՎԵԻՆ (տես՝ Սաղմ. 79:10):

Այս երկու համարներն ունեն ԱՂԵՐՍԻ չորս ՀՐԱՄԱՅԱԿԱՆՆԵՐ և երկու ԱՆԿԱՏԱՐՆԵՐ, որոնք կիրառված են որպես ՀԱՅՅԱԿԱՆՆԵՐ:

1. մի՛ հիշիր – BDB 269, KB 269, *Qal* ԱՆԿԱՏԱՐ, կիրառված ՀԱՅՅԱԿԱՆ իմաստով
2. թող շուտով – BDB 554, KB 553, *Piel* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ
3. հասնեն մեզ – BDB 869, KB 1068, *Piel* ԱՆԿԱՏԱՐ՝ կիրառված ՀԱՅՅԱԿԱՆ իմաստով
4. օգնիր մեզ – BDB 740, KB 810, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ
5. փրկիր մեզ – BDB 664, KB 717, *Hiphil* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ
6. ներիր մեզ մեր մեղքերը – BDB 497, KB 493, *Piel* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ

**79:8** Առաջին տողը ակնարկ է ապագա սերունդներին մեղքի փոխանցման մասին աստվածաբանական խնդրի շուրջ (և / կամ օրհնության, ներման): Տաս Պատվիրաններում՝

1. մեղքի հետևանքները հասնում էին մինչև իսկ երրորդ ու չորրորդ սերունդները (տես՝ Ելից 20:5, 2 Օրինաց 5:9):
2. ՅԱՀՎԵԻՆ սիրող և Նրա պատվիրանները պահողների շատ սերունդներին Նրա ողորմությունը (տես՝ Ելից 34:7, 2 Օրինաց 5:10, 7:9)

Թե՛ մեղքի և թե՛ ողորմության հետևանքները անցնում են ժամանակի միջով, սակայն դրանցից յուրաքանչյուրը հիմնված է մարդկային ընտրությունների՝ որոշումների վրա:

**79:9 «ո՛վ մեր փրկության Աստված»** Այս արտահայտությունը կրկնվող անուն է Իսրայելի Աստծո համար (տես՝ Սաղմ. 18:46, 25:5, 25:5, 27:9, 65:5, 85:4):

BDB թվարկում է «փրկություն» (BDB 447) տերմինի համար մի քանի կերպ, որոնք կիրառվում են ՀԿ-ում:

1. ԻԳԱԿԱՆ
  - ա. բարեկեցություն, բարգավաճում
  - բ. ազատագրում
  - գ. փրկություն արտաքին չարիքից (այսինքն՝ Սաղմ. 78:22, 80:2)
  - դ. հաղթանակ (այսինքն՝ Սաղմ. 20:5, 21:1,5, 44:4)
2. ԱՐԱԿԱՆ
  - ա. ապահովություն, բարեկեցություն, բարգավաճում (այսինքն՝ Սաղմ. 12:5)
  - բ. փրկություն (կիրառությունն այստեղ)
  - գ. հաղթանակ (այսինքն՝ Սաղմ. 20:6)

**79:10-13** Նկատե՛ք մարդկանց երկու տեսակը (այսինքն՝ իսրայելացի - հեթանոս): Հեթանոսները տեղյակ չեն ՅԱՀՎԵԻՅ և նրանք ապրում են անպատշաճ կերպերով: Իսարները աղաչում է դատաստանի համար, որպեսզի Նրա ժողովուրդը կարողանա՝

1. «գոհանալ» - BDB 392, KB 389, *Hiphil* ԱՆԿԱՏԱՐ
2. «պատմել Նրա փառքի մասին» - BDB 707, KB 765, *Piel* ԱՆԿԱՏԱՐ

Սարսափելի է տեսնել սաղմոսերգուի ցավը Երուսաղեմի անկման, տաճարի պղծման և Դավթի սերնդի գերեվարման վրա: Այնուամենայնիվ, հավատքով նա դեռ կարող է տեսնել ապագայում փառաբանության ժամանակները:

**79:10 «Ո՛ւր է նրանց Աստվածը»** Ազգերը հարցնում են հզոր մի հարց (տես՝ Սաղմ. 42:3,10, 115:2): Սաղմոս 42-ում հարցադրվում է այլ իսրայելացիների կողմից, սակայն Սաղմոս 115-ում և այստեղ՝ հեթանոսների կողմից: Արդյո՞ք նրանք փնտրում են տեղեկություն, թե՞ ծաղրում են Իսրայելի Աստծուն: Երկրորդ տարբերակը ակնհայտ է համատեքստից, սակայն առաջին տարբերակը Աստծո վերջնական նպատակն է (տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՅԱՀՎԵԻ ՀԱՎԻՏԵՆԱԿԱՆ ՓՐԿԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ):

**79:11 «մահվան սահմանվածներին»** Սա հազվադեպ արտահայտություն է (տես՝ Սաղմ. 102:20): Այն կարող է նկատի ունենալ՝

1. նվաճման ժամանակ փրկված գերիներին

2. մահապատժի սպասողներին
3. տանճարից հեռացածներին (JPSOA ծանոթագրություն, տես՝ Սաղմ. 79:13):

**79:12 «յորթնապատիկ»** Յոթ թիվը սովորաբար մատնանշում է «կատարելություն» (տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՍՈՒՐԲ ԳՐԶՈՒՄ ՄԻՄՎՈՒԻԿ ԹՎԵՐԸ), սակայն այստեղ մատնանշում է կատարյալ (տես՝ Օրինաց 28:25, Սաղմ. 12:6, Առակ. 6:31) դատաստան (տես՝ Ծննդ. 4:15, 24):

❖ **«իրենց ծոցը»** «Ծոց» տերմինը (BDB 300) կիրառվում է Աստվածաշնչում շատ տարբեր իմաստներով: Այստեղ այն մատնանշում է անձի ներաշխարհը (տես՝ Սաղմ. 35:13, Երեմ. 32:18): Սաղմոսերգուն աղոթում է հեթանոս զավթիչների հանդեպ կատարյալ դատաստանի համար (այսինքն՝ Եսայի 65:6,7):

❖ **«այն նախատինքը, որով մեր դրացիները Քեզ անարգեցին»** «Նախատինք» կամ «ծաղրուծանակ» ԳՈՅԱԿԱՆԸ և ԲԱՅԸ (BDB 357, տես՝ Սաղմ. 74:10,18 և նմանատիպ արմատը Սաղմ. 74:22, Ողբ. 3:30,61, 5:1-ում) հաճախ կիրառվում է Սուրբ Գրքում: Սաղմոսերգուն Երուսաղեմի վրա հարձակումը դիտարկում է որպես հարձակում ՅԱՀՎԵԻ վրա:

**79:13 «Քո արոտի ոչխարները»** Հետաքրքիր է, որ Ասափի Սաղմոսներում այս թեման ամփոփում է Սաղմոս 77, 78 և 79 (նաև նկատեք, թե ինչպես է Սաղմոս 80 սկսում): Այն արտացոլում է Սաղմոս 23-ի նկարագրության հզոր, անձնական ճշմարտությունը:

## **ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ**

Սա ուղեցույց հանդիսացող սերտողության մեկնաբանություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնաբանության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսով: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին եք մեկնաբանության մեջ առաջին տեղում: Դուք չպետք է այն զիջեք մեկնաբանին:

Քննարկման այս հարցերը կազմվել են ձեզ օգնելու, որպեսզի մտածեք գրքի այս բաժնի գլխավոր հարցերի շուրջ: Դրանք մտածելու տեղիք տվող հարցեր են և վերջնական չեն:

1. Ինչո՞ւ է Ք.Ա. 586թ-ը հանդիսանում այս Սաղմոսի պատմական միջավայրի համար լավագույն տարբերակը:
2. Ինչո՞ւ էր Աստված բարկացել Իր ժողովրդի վրա: Այս Սաղմոսում ովքե՞ր են Իր ժողովուրդը:
3. Արդյո՞ք մեղքը փոխանցվում է սերնդեսերունդ:
4. Ինչպե՞ս է Սաղմոս 79:10 կապված Աստծո հավիտենական փրկության նպատակի հետ: (տես՝ Հատուկ Թեմա. ՅԱՀՎԵԻ հավիտենական փրկագործության ծրագիրը):
5. Ինչպե՞ս է Սաղմոս 79:12 կապված ներման և փրկության աղոթքի հետ: